

# Հայտարարություն 2017թ. մայիսի 14-ին Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ Aravot.am-ի թղթակից Հոփսիմե Ջեբեջյանի հետ տեղի ունեցած միջադեպի առթիվ քրեական գործի հարուցումը մերժելու կապակցությամբ

Հունիսի 4, 2017

ՀՀ ոստիկանության Երևանի վարչության Մալաթիայի բաժնում որոշում է կայացվել մերժել Երևանի ավագանու ընտրությունների օրը՝ 2017թ. մայիսի 14-ին, Մալաթիա-Սեբաստիա համայնքի 7/46 ընտրատեղամասում Aravot.am-ի թղթակից Հոփսիմե Ջեբեջյանի հասցեին սպառնալիքներ եւ վիրավորանք հնչեցնելու դեպքով քրեական գործ հարուցելը:

Հիշեցնենք, որ վերոհիշյալ տեղամասի ընտրական հանձնաժողովի անդամ Արայիկ Գեւորգյանն ի պատասխան լրագրողի հարցի, թե ինչու են ընտրողները քվեաթերթիկներն իրեն ցույց տալիս՝ մինչեւ քվեատուփի մեջ գցելը, նրա վրա գոռալով ասել է. «Տղա ըլնէիր, կտայի մոռութի կջարդէի, նոր կիմանայիր, թուլին նայի...»: [Միջադեպի տեսագրությունը](#) [հրապարակվել է Aravot.am-ում](#) եւ այլ ՁԼՄ-ներում:

Որպես մերժման հիմք ոստիկանությունը ներկայացրել է նաեւ Գեւորգյանի բացատրությունը, թե «ինքը ոչ ոքի չի սպառնացել, միայն բարձր տոնով վիճել է եւ նշված հայտարարությունը արել է՝ հարգելով, որ իր դիմաց կին է կանգնած»: Տարակուսանք է հարուցում նաև այն, որ ոստիկանները, անտեսելով ՀՀ քրեական օրենսգրքի 164 հոդվածը («Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը»), վկայակոչել են միայն 154-ը, որը պատասխանատվություն է նախատեսում քվեարկության գործընթացի խախտումների համար: Վերջինը ավելի քիչ է առնչվում տվյալ միջադեպին եւ, ամենայն հավանականությամբ, հարմար է խնդիրը կոծկելու համար:

Լուրջ մտահոգություն է առաջացնում եւս մեկ փաստ. թեեւ որոշումն ընդունվել էր դեռ մայիսի 20-ին, սակայն այն չէր տրամադրվում լրագրողին, եւ միայն նրա համառության ու հետեւողականության շնորհիվ, ՀՀ գլխավոր դատախազին դիմելուց հետո՝ հունիսի 30-ին փաստաթուղթը հասավ Հոփսիմե Ջեբեջյանին:

Հաշվի առնելով վերոգրյալը, մենք՝ լրագրողական կազմակերպություններս, պահանջում ենք.

- ՀՀ ոստիկանապետից՝ պատասխանատվության ենթարկել 2017թ. մայիսի 14-ին 7/46 ընտրատեղամասում տեղի ունեցած միջադեպի քննությունն իրականացրած պաշտոնատար անձանց՝ ակնհայտ փաստերը անտեսելու, կողմնակալություն ցուցաբերելու եւ անհիմն որոշում կայացնելու համար,
- ՀՀ դատախազությունից՝ քրեական գործ հարուցել տվյալ միջադեպի առնչությամբ, պատշաճ վերահսկողություն իրականացնել դրա նկատմամբ՝ ապահովելով անաչառ քննություն:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ  
ՄԵԴԻԱ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ  
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ  
ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ – ՀԱՅԱՍՏԱՆ  
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ  
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ  
ԳՈՐԻՍԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ